

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Սարդարապատի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար մասնագետների /ծածկագիր 3.1-1/ և /ծածկագիր 3.1-2/ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-1/

- Աշխատակազմի առաջատար մասնագետը՝
- ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.
 - իր լիազորությունների սահմաններում , անհրաժեշտության դեպքում նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ , տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
 - մասնակցում է համայնքի Զինապարտների գրանցամատյանի՝ օրենքով սահմանված կարգով վարման աշխատանքներին, ինչպես նաև ըստ բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքից ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայացնելու համար.
 - իր իրավասության սահմաններում մասնակցում է զորակոչի , զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպման աշխատանքներին.
 - իր իրավասության սահմաններում մասնակցում է նախազորակոչային , զորակոչային տարիքի անձանց պահեստազորայինների զինվորական հաշվառման.
 - աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կատարում է համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների կազմակերպումը և վերահսկումը.
 - իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ: Առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:
- ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն
- պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն
- նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝ միջնակարգ կրթություն

2. Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-2/

- Աշխատակազմի առաջատար մասնագետը՝
- ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.
 - պատասխանատվություն է կրում համակարգչային մուտքագրվող , ելքագրվող ծառայողական գաղտնիք պարունակող փաստաթղթերի գաղտնիության ապահովման համար.
 - իրականացնում է հարկային և ոչ հարկային եկամուտների տեղեկատվական տվյալների շտեմարանի հետ կապված աշխատանքները.
 - իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ: Առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:
- ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

-պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն

-նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝ միջնակարգ կրթություն

Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

-գրավոր դիմում / հանձնաժողովի անունով/,

-համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարմանը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ / ների/, աշխատանքային գրքույկի/ վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից/ պատճենները՝ բնօրինակի հետ միասին

- հայտարարություն այն մասին , որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 1801 –Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

-հայտարարություն այն մասին , որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

-«< Համայնքային ծառայության մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «< Ե>> կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձիք ներկայացնում են զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք ,

1 լուսանկար 3x4 չափսի.

-անձնագրի պատճեն.

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթերով: Փաստաթղթերն ընդունվում են «< Արմավիրի մարզի Սարդարապատի համայնքապետարանի շենքում / հասցե՝ «< Արմավիրի մարզ գ. Սարդարապատ , Աբովյան 74 հեռ. 077-57-73-23 / կամ «< Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հասցեով վարչություն / հասցե՝ ք, Արմավիր Աբովյան 71 , հեռ. /0237/2-07-70,2-76-49/ ամեն օր ժամը 10⁰⁰-17⁰⁰-ն , բացի շաբաթ և կիրակի օրերից: Ներկայացված փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում : Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու , ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել «< Արմավիրի մարզ Սարդարապատի համայնքապետարանի աշխատակազմ // հասցե՝ «< Արմավիրի մարզ գ, Սարդարապատ , Աբովյան 74 հեռ. 077-57-73-23 կամ «< Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն / հասցե՝ ք, Արմավիր Աբովյան 71 , հեռ. /0237/2-07-70, 2-76-49/:

Մրցույթները կկայանան 2017 թվականի դեկտեմբերի 6 -ին ժամը 11:00 -ին և 13:00-ին Սարդարապատի համայնքապետարանի շենքում:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2017 թվականի նոյեմբերի 21 -ը :

Հասցե «< Արմավիրի մարզի, Սարդարապատ համայնք Աբովյան 74

Էլ. փոստ sardarapat@mta.gov.am

Հեռ. 077-57-73-23